ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ 12-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Թվայնացումը լրատվամիջոցների ազատության համար

Սեպտեմբերի 29-30, 2015 թ., Թբիլիսի, Վրաստան

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

Սույն փաստաթղթում ամփոփված են ԶԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ Ներկայացուցչի գրասենյակի կողմից 2015 թվականի սեպտեմբերի 29-30-ը Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում կազմակերպված՝ Լրատվամիջոցների հարցերին նվիրված հարավկովկասյան 12-րդ համաժողովի ընթացքում Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի ավելի քան 60 լրագրողների, կառավարությունների և քաղաքացիական հասարակությունների ու գիտական շրջանների ներկայացուցիչների, ինչպես նաև միջազգային փորձագետների և Սլովենիայի, Բոսնիա և Հերցոգովինայի, Գերմանիայի և Դանիայի ու մասնակիցների առաջարկությունները:

Համաժողովի ուշադրության կենտրոնում թվային միջավայրում կարգավորող մարմինների դերակատարման և բազմակարծության ու լրատվամիջոցների ազատության բարելավման հարցերն էին՝ թվային հեռարձակման անցնելու համատեքստում:

Համաժողովի մասնակիցները համաձայնեցին, որ.

- Թվային վերգետնյա հեռարձակումը շատ ավելին է, քան պարզապես տեխնոլոգիական փոփոխությունը: Այն ներկայացնում է որոշակի ու կարևոր հնարավորություն՝ լրատվամիջոցների բազմակարծությունը, տարբեր ծրագրերի ձևաչափերն ու տեղեկատվության մատչելիությունը բարելավելու համար: Թվային հեռարձակման անցնելը որոշակի ազդեցություններ ունի ժողովրդավարական արժեքների ու սկզբունքների զարգացման համար: Անալոգայինից թվային վերգետնյա հեռարձակման գործընթացը ավարտին հասցնելը պետք է լինի լրատվամիջոցների

ոլորտում քաղաքականության ամենագերակա հարցը կառավարությունների և այլ պետական մարմինների համար և որին պետք է լիովին հասնել հնարավորինս արագորեն՝ լիարժեքորեն ու արդյունավետ պաշտպանելով արտահայտվելու ազատությունը և լրատվամիջոցների ազատությունը: Քաղաքացիներին պետք է տեղեկացել առաջընթացի և իրականացման ավարտի ժամկետի մասին:

- Լրատվամիջոցների գործունեության կարգավորողները պետք է էական դերակատարում ունենան նոր թվային հաղորդակցությունների միջավայրում, մասնավորապես բազմակարծության պաշտպանության և արտահայտվելու ազատության, ազատ լրատվամիջոցների ապահովման և տեղեկատվության հասանելիության առումներով:
- Թվայնացման քաղաքականություններում և կանոնակարգերում հարկ է հատուկ ուշադրություն դարձնել այն կարևոր դերին, որ ունեն մարզային և տեղական հեռարձակողները՝ կապված իրենց համապատասխան համայնքների հետ:
- Լրատվության ոլորտը կարգավորողների անկախությունը պետք է երաշխավորեն և հարգեն պետական ու լրատվական դաշտի բոլոր անդամները՝ քաղաքական կամ տնտեսական անհարկի միջամտություններից խուսափելու համար: Առանցքային տարրը համարժեք իրավական միջավայրի առկայությունն է՝ այնպիսի ֆինանսական սխեմայի հետ միասին, որը պատշաճորեն պահպանում է այդ անկախությունը:
- Պետք է ճանաչել և պաշտպանել լրատվամիջոցների կարգավորողների անկախությունը լիցենզավորման գործընթացում՝ արդար, բաց և թափանցիկ հեռարձակում երաշխավորելու և բազմակարծիք լրատվության միջավայր ստեղծելու համար: Նման գործընթացները պետք է առաջնորդվեն հստակ ու նախապես սահմանված ընթացակարգերով ու չափանիշներով:
- Լրատվության ոլորտը կարգավորողները պետք է գործեն թափանցիկ ու պատասխանատու ձևով՝ դատական վերահսկողության նախատեսմամբ:
- Նոր լրատվամիջոցները, ինչպիսիք են՝ առցանց և հոսքային հեռուստատեսությունը և ըստ պահանջի տրամադրվող աուդիո-վիդեո ծառայությունները, պետք է առաջնորդվեն համամասնական ու ազատականացված մոտեցմամբ, եվրոպական չափանիշներին համահունչ:
- Հանրային լրատվամիջոցները պետք է առանցքային դերակատարում ունենան բազմաթիվ ու բազմազան մեդիա միջավայր երաշխավորելու հարցում՝ թվային հեռարձակման անցման գործընթացն ավարտելուց հետո: Այս դերը համաձայնեցվել և բարձրացվել է Լրատվամիջոցների հարցերին նվիրված հարավկովկասյան 11-րդ համաժողովում:
- Լրագրության նոր ձևերը, որոնք հայտնի են նաև որպես բաց կամ քաղաքացիների լրագրություն և առաջացել են լրատվամիջոցների թվայնացման արդյունքում, պետք է լիարժեք կերպով օգտվեն նույն իրավունքներից ու պաշտպանությունից, ինչպես ավանդական լրատվամիջոցները, քանի որ արտահայտվելու ազատությունը պաշտպանված է ավանդական ու նոր լրատվամիջոցների հարթակներում:

- Պետությունները պետք է որդեգրեն թվային դարաշրջանում մտավոր սեփականության իրավունքները պաշտպանելու համարժեք օրենսդրություն՝ լիարժեքորեն հարգելով արտահայտվելու ազատությունը և լրատվամիջոցների ազատությունը:
- Պետք է ներդնել և ամրապնդել արդյունավետ ինքնակարգավորվող գործիքներ՝ թվային լրատվամիջոցների միջավայրում իրավունքներին և պատասխանատվություններին վերաբերող ճկուն և չմիջամտող համակարգին աջակցելու համար:
- ԶԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցիչը օգնելու է մասնակից Պետություններին թվային հեռարձակման անցման գործընթացը ավարտին հասցնելու և համապատասխան քաղաքականությունները և կանոնակարգերը իրականացնելու համար՝ արտահայտվելու ազատությունը և լրատվամիջոցների ազատությունը, ինչպես նաև բազմակարծությունը ամրապնդելու համար:
- Թվային աշխարհում պատերազմի և ատելության քարոզչության խնդիրներին Պետությունները պետք է անդրադառնան պատշաճորեն՝ միջազգային չափանիշների համաձայն: